РЕДАКЦИОННАЯ

Երբ կեղծիքը դառնում է բարոյականություն, իսկ անտարբերությունը՝ ազատություն

Սարգսյան Սուրեն Թ.
պ.գ.դ., պրոֆեսոր, առաջատար գիտաշխատող, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ (Երևան, ՀՀ)
sargsyansuren@yandex.ru

EDN: YRRJVH

«Աշխարհում երբևէ արված ամենակործանարար սխալը քաղաքագիտությունը բարոյականությունից առանձնացնելն է»:
Պերսի Բիշի Շելի

Աշխարհը մի օրում չկորցրեց իր մարդկային դեմքը: Դա տեղի ունեցավ աստիճանաբար՝ այն ժամանակ, երբ կեղծիքը սկսեցին անվանել ճկունություն, վախը՝ զգուշություն, անտարբերությունը՝ ազատություն, իսկ սեփական շահի գերադասումը՝ ողջամտություն: Բառերը մնացին, բայց դրանց իմաստները փոխվեցին: Մարդը սովորեց ոչ այնքան ճշմարտությունն ասել, որքան այնպիսի տպավորություն ստեղծել, թե ինքն է ճշմարտության կրողը: Սկզբունքները սկսեցին գործել ըստ անհրաժեշտության, բարոյականությունը՝ ըստ հանգամանքների, իսկ պատասխանատվությունը հաճախ հայտնվեց այնպիսի տեղերում, որտեղից այն վաղուց հեռացել էր:

Ամենահետաքրքիրն այն է, որ այս ամենի մասին խոսելիս մենք սովորաբար ուրիշներին նկատի ունենք: Ուրիշներն են կեղծավոր, ուրիշներն են անարդար, ուրիշներն են անպատասխանատու, ուրիշներն են սխալվում: Մենք, իհարկե, բացառություն ենք: Մենք միշտ ունենք մեր արարքների բացատրությունը, մեր սխալների արդարացումը և մեր լռության համար՝ միանգամայն համոզիչ պատճառ: Ուրիշի եսասիրությունը դատապարտում ենք որպես բնավորության արատ, իսկ մերը բացատրում հանգամանքներով: Ուրիշի կոպտությունը համարում ենք անքաղաքավարություն, մերը՝ ճշմարտախոսություն: Ուրիշի վախկոտությունը նկատում ենք անմիջապես, իսկ մեր զգուշավորությունը ներկայացնում որպես խոհեմություն: Այսպես մարդը ստեղծում է իր մասին մի հարմարավետ պատրանք, որտեղ ինքն անպայման լավն է, արդարը և իրավացի: Իսկ եթե իրականությունը չի համապատասխանում այդ պատկերին, առավել ևս՝ իրականությունն է մեղավոր: Սակայն հենց այստեղից էլ սկսվում են մեր անձնական, հասարակական ու քաղաքական դժբախտությունները: Որովհետև մարդը կարող է սխալվել և ուղղել սխալը, կարող է պարտվել ու վերականգնել ուժերը, կարող է նույնիսկ կորցնել ամեն ինչ և նորից սկսել: Բայց երբ նա կորցնում է սեփական սխալը տեսնելու կարողությունը, ինքնաքննադատությունը փոխարինում է ինքնարդարացմամբ, իսկ ճշմարտությունը՝ սեփական հարմարավետությամբ, նրա առաջընթացն աստիճանաբար դառնում է պատրանք:

Սակայն բարոյականությունը գեղեցիկ բառերի հավաքածու չէ: Այն ամենօրյա ընտրություն է՝ երբ կարող ես նվաստացնել, բայց ընտրում ես հարգել, երբ կարող ես թաքցնել սխալդ, բայց ընդունում ես այն, երբ կարող ես սեփական շահը պաշտպանել ուրիշի արժանապատվության հաշվին, բայց կանգ ես առնում: Եվ որքան էլ տարօրինակ հնչի, մարդուն բնութագրում է ոչ այնքան այն, թե ինչ արժեքներ է հռչակում, որքան այն, թե ինչ է անում, երբ այդ արժեքներին հավատարիմ մնալը դառնում է իր համար անշահավետ: Այս ճշմարտությունը վերաբերում է նաև մարդկային հարաբերություններին: Մենք ուզում ենք անկեղծություն, բայց երբեմն վախենում ենք անկեղծ լինել: Կարոտում ենք, բայց չենք գրում: Ուզում ենք խոսել, բայց սպասում ենք, որ առաջին քայլն անի դիմացինը: Մեր զգացմունքները թաքցնում ենք հպարտության հետևում, քնքշությունը՝ սարկազմի, իսկ կորցնելու վախը՝ անտարբերության դիմակի տակ: Եվ մինչ երկու մարդ փորձում են ապացուցել իրենց անկախությունը, երբեմն կորցնում են հենց այն, ինչն իրենց համար ամենաթանկն էր:

Վերջերս մենք կարծես սովորել ենք չասել այն, ինչ զգում ենք, բայց սպասում ենք, որ մյուսները կհասկանան մեզ: Չենք արտահայտում մեր վերաբերմունքը, բայց վիրավորվում ենք, երբ այն չեն կռահում: Իսկ չանել առաջին քայլը, բայց դժգոհել, որ հարաբերությունները չեն զարգանում, այնքան էլ արդարացի չէ: Հետո, երբ ժամանակն անցնում է, հանկարծ հասկանում ենք, որ երբեմն ոչ թե սերն է պակասել, այլ անկեղծությունը, ոչ թե զգացմունքն է անհետացել, այլ համարձակությունը՝ այն պատասխանատվությամբ արտահայտելու: Այդուհանդերձ, կարծում եմ, որ անկեղծությունը չպետք է շփոթել անզուսպ լինելու հետ: Ճշմարտախոսությունը վիրավորելու արտոնագիր չէ, ինչպես ազատությունը՝ անպատասխանատվության իրավունք: Կարելի է ասել ճշմարտությունը՝ չնվաստացնելով դիմացինին, կարելի է չհամաձայնել՝ առանց ատելության, կարելի է հեռանալ՝ առանց վրեժի: Իրական ուժը սեփական սկզբունքները պահպանելն է՝ չկորցնելով ուրիշի արժանապատվության նկատմամբ

հարգանքը: Հետո էլ մարդուն պետք է ճանաչենք ոչ միայն նրա խոսքերից կամ նույնիսկ սկզբունքներից: Երբեմն բավական է տեսնել՝ նա որտե՞ղ է կանգնած, երբ քո կյանքում անձրև է: Արևոտ օրերին կողքիդ կանգնելը հեշտ է: Երբ հաջողակ ես, ուժեղ, առողջ, երբ ունես դիրք, հնարավորություններ և կարող ես ինչ-որ բան տալ, շուրջդ մարդկանց պակաս չի լինի: Բայց երբ այլևս ոչինչ չունես առաջարկելու, բացի քո ցավից, հենց այդ ժամանակ է պարզվում, թե ով է իսկապես քոնը: Քանզի ամենաթանկ մարդը միշտ չէ, որ լուծում է քո խնդիրները: Երբեմն նա պարզապես մնում է կողքիդ՝ առանց գեղեցիկ խոսքերով քողարկելու այն, ինչ դու ապրում ես: Քո ցավը նրա կողքին ամոթալի չէ:

Երբեմն հանդիպել եմ մարդկանց, որոնց պաշտոնը բարձր էր, բայց մարդկային չափը՝ փոքր, և մարդկանց, որոնց զբաղեցրած տեղը հասարակ էր թվում, բայց նրանց նկատմամբ հարգանքը ծնվում էր ինքնաբերաբար: Մարդուն երբեք չեմ չափել նրա աթոռով: Ինձ համար ավելի կարևոր է՝ ինչպիսի՞ն է նա, երբ իրենից ոչինչ պետք չէ: Դիրքը կարող է մարդուն բարձրացնել աթոռի վրա, բայց միայն մարդկությունն է նրան բարձրացնում մարդկանց աչքում: Ուստի պետք է այնպես ապրել, որ մենք ինքներս արժեք տանք աթոռին, ոչ թե աթոռը՝ մեզ: Պաշտոնները փոխվում են, իշխանությունները հեռանում, հաջողությունները մարում: Իսկ մարդուն հիշում են այն բանի համար, թե ինչ է արել ուրիշների համար: Բայց այստեղ առաջանում է հաջորդ հարցը. եթե մարդն այդքան լավ է կարողանում ինքն իրեն խաբել, ապա ինչպե՞ս է նա վարվում այն ժամանակ, երբ իր անձնական շահը դառնում է հասարակական որոշման հիմք, իսկ իր ինքնարդարացումը՝ քաղաքականության գործիք: Հենց այստեղ է, որ անհատական բարոյականությունը դառնում է հասարակական ու պետական խնդիր:

Քաղաքականությունը, անշուշտ, չի կարող հիմնվել միայն բարի մտադրությունների վրա: Այն պահանջում է իրատեսություն, շահերի հաշվարկ, դժվար որոշումներ և պատասխանատվություն: Բայց իրատեսությունը չպետք է դառնա անսկզբունքայնության հոմանիշ, իսկ պետական շահը՝ ցանկացած արարք արդարացնելու համընդհանուր արտոնագիր: Եթե հանուն արդարության ոտնահարվում է մարդու արժանապատվությունը, եթե հանուն հայրենիքի անտեսվում է հայրենակցի կյանքը, եթե հանուն ճշմարտության ճնշվում է այլախոհությունը, ապա արժե հարցնել՝ արդյո՞ք ընտրված միջոցները չեն ոչնչացնում հենց այն արժեքը, որի անունից կիրառվում են:

Պետությունը միայն սահմանը, դրոշը կամ պետական շենքերը չեն: Այն նաև մարդու արժանապատվությունն է, օրենքի նկատմամբ վստահությունը, արդարության զգացումը և վաղվա օրվա հանդեպ հավատը: Պետությունը չի կարող երկարաժամկետ վստահություն կառուցել այն արժեքների վրա, որոնք հրապարակավ հռչակվում են, իսկ գործնականում անտեսվում: Երբ քաղաքական գործչի խոսքի և վարքի միջև անդունդ է առաջանում, երբ արդարությունը կիրառվում է ընտրովի, իսկ պատասխանատվությունը մշտապես տեղափոխվում է ուրիշների ուսերին, թուլանում է ոչ միայն իշխանության հեղինակությունը, այլև հասարակության հավատը սեփական պետության նկատմամբ: Իսկ վախով կարելի է ենթարկեցնել, բայց դժվար է ոգեշնչել: Կարելի է ստիպել մարդուն լռել, բայց հնարավոր չէ լռության միջոցով նրա մեջ վստահություն ստեղծել: Եթե քաղաքացին վախենում է հարցնել, մտածել, քննադատել ու պաշտպանել սեփական արժանապատվությունը, պետությունը կարող է արտաքուստ պահպանել իր հաստատությունները, բայց կորցնել կենսունակությունը: Պետությունը չի կառուցվում քաղաքացիների վախի, այլ նրանց պատասխանատու մասնակցության վրա: Հենց այստեղ է, որ մեր հասարակական կյանքում հաճախ նկատվող աղմուկը դառնում է հատկապես մտահոգիչ: Այսօր մեզանում բոլորը կարծես խոսում են, վիճում, դատապարտում, մեղադրում: Խորհրդարանից մինչև սոցիալական ցանցեր՝ ամենուր կարծիքներ են հնչում, երբեմն՝ այնպիսի համոզվածությամբ, կարծես բարձր ձայնն ինքնին փաստարկ է: Մարդիկ զբաղված են պետությունը փրկելով, բայց երբեմն դժվար է հասկանալ՝ այդ փրկության ընթացքում ո՞վ է զբաղվում պետության ամենօրյա գործերով:

Ձայրանալու համար մեծ ջանք պետք չէ: Ատելու համար նույնպես, քանդելու համար՝ առավել ևս: Դժվարը ստեղծելն է: Ավելի դժվար է պահպանելը: Իսկ պետություն կառուցելը պահանջում է գիտելիք, համբերություն, կարգապահություն, ինքնաքննադատություն և երկարաժամկետ մտածողություն: Մեզանում կարծես ձևավորվել է մի տարօրինակ հասարակական տեխնոլոգիա. եթե իրական խնդիր ունես, դրա մասին լրջորեն մտածելու փոխարեն ստեղծիր ավելի բարձր աղմուկ: Եթե տնտեսական հարց կա՝ կազմակերպիր միջոցառում: Եթե սոցիալական դժգոհություն կա՝ գտիր նոր թեմա: Եթե ապագայի մասին ասելիք չունես՝ խոսիր ապագայի մասին այնքան բարձր, որ ներկայի խնդիրները չլսվեն: Եվ այսպես օրակարգը երբեմն փոխարինում է կառավարմանը, իսկ փառատոնը՝ տնտեսական քաղաքականությանը:

Բայց պետության գլխավոր պարտականությունը քաղաքացիներին անընդհատ զվարճացնելը չէ: Նրա պարտականությունն է հնարավորինս կանխատեսելի պայմաններ ապահովել, որպեսզի մարդը

կարողանա աշխատել, ընտանիք պահել, կրթվել, բուժվել և իր երեխաների ապագայի մասին մտածել՝ առանց ամեն օր նոր անորոշության առաջ կանգնելու:

Տնտեսական ցուցանիշներն իհարկե կարևոր են, պետական բյուջեն՝ նույնպես: Իսկ պակասուրդը ինքնին ո՛չ տնտեսական աղետի ապացույց է, ո՛չ էլ հաջողության երաշխիք: Այն կարող է լինել պետական ֆինանսական քաղաքականության գործիք, բայց պահանջում է հաշվարկ, վերահսկողություն և հանրային բացատրություն: Նույնը վերաբերում է էներգետիկ անվտանգությանը: Գազի գնի հնարավոր փոփոխությունը Հայաստանում պարզապես գազի մասին խոսակցություն չէ: Այն առնչվում է ջեռուցմանը, հացին, արտադրությանը, ծառայություններին և ընտանեկան բյուջեին: Հետևաբար քաղաքացուն պետք չէ ո՛չ կեղծ հանգստացնել, ո՛չ էլ նախապես խուճապի մատնել: Պետք է հստակ ասել՝ ինչն է հայտնի, ինչ ռիսկեր կան, և պետությունն ինչ է պատրաստվում անել տարբեր իրավիճակներում: Եթե պետությունն ունի ռիսկերի կառավարման համակարգ, ինչո՞ւ քաղաքացին այդ համակարգի մասին հաճախ իմանում է միայն այն ժամանակ, երբ խնդիրը հասնում է իր գրպանին:

Այս հարցն առավել կարևոր է սոցիալական քաղաքականության դեպքում: Պետական բյուջեի յուրաքանչյուր թվի հետևում մարդ կա՝ թոշակառու, ընտանիք, երեխա, հիվանդ մարդ, զինվորի ծնող: Մարդը բյուջեի տող չէ: Ուստի սոցիալական քաղաքականությունը գնահատելիս բավարար չէ հաշվել, թե որքան գումար է հատկացվել կամ խնայվել: Պետք է նաև հարցնել՝ **ինչպիսի՞ արժանապատվություն է ապահովում այդ քաղաքականությունը մարդուն:** Թաղման նպաստի չափի շուրջ քննարկումները, օրինակ, միայն թվի կամ բյուջետային նպատակահարմարության հարց չեն: Դրանք նաև ցույց են տալիս, թե պետությունն ինչպես է պատկերացնում իր հարաբերությունները քաղաքացու հետ նրա կյանքի ամենախոցելի պահին: Մարդը պետության համար արժեք ունի՞ միայն այն ժամանակ, երբ աշխատում է, հարկ է վճարում և տնտեսական արդյունք ապահովում, թե՞ նրա արժանապատվությունը պահպանելու պարտականությունը չի ավարտվում նաև այն ժամանակ, երբ նա այլևս չի կարող որևէ նյութական ներդրում ունենալ: Հակառակ դեպքում կարող ենք հասնել մի հրաշալի «տնտեսագիտական» բանաձևի. ապրիր այնպես, որ բյուջեին քիչ արժենաս, աշխատիր այնպես, որ հարկ շատ վճարես, իսկ մահանալիս աշխատիր ընտանիքիդ համար և՛ս մեկ անգամ ծախս չլինել: Սա, իհարկե, սարկազմ է: Բայց երբեմն սարկազմը պարզապես իրականության այն հայելին է, որի մեջ մենք չենք սիրում նայել:

Նույն կերպ պետք է վերանայենք նաև հաջողության մասին մեր պատկերացումները: Ժամանակակից աշխարհը հաճախ հարստությունը, մրցունակությունը և տնտեսական ձեռքբերումները ներկայացնում է որպես բարեկեցության գլխավոր չափանիշներ: Սակայն նույնիսկ տնտեսական հաջողություններով աչքի ընկնող հասարակություններում կարող են պահպանվել կյանքի արագ տեմպի, աշխատանքի ծանրաբեռնվածության, անձնական ժամանակի պակասի և ներքին դժգոհության խնդիրները: Այսպես, Սինգապուրի օրինակը առիթ է տալիս մտածելու՝ արդյոք մշտական անբավարարվածությունն ու կատարելության ձգտումը միշտ նպաստո՞ւմ են առաջընթացին, և որտե՞ղ է ավարտվում նպատակասլացությունը՝ սկսվում սեփական կյանքի որակի զոհաբերումը: Քանզի անբավարարվածությունը երբեմն կարող է մղել մարդուն զարգանալու, բայց այն երջանկության պարտադիր պայման չէ: Եթե ձեռքբերումների գինը սեփական առողջության, ընտանիքի, ազատ ժամանակի և ներքին խաղաղության մշտական կորուստն է, ապա գուցե ժամանակն է վերանայել ոչ միայն աշխատանքի կազմակերպումը, այլև հաջողության մեր պատկերացումը: Հարստությունը հնարավորությունների միջոց է, ոչ թե երջանկության երաշխիք: Իսկ աղքատությունը ռոմանտիկացնելու ոչ մի հիմք չկա: Մարդկային բարեկեցությունը պահանջում է և՛ արժանապատիվ կենսապայմաններ, և՛ իմաստալից հարաբերություններ, և՛ սեփական կյանքի նկատմամբ որոշակի վերահսկողության զգացում: Ուրեմն հարցը միայն այն չէ, թե ինչի ենք հասել: Պետք է նաև հարցնենք՝ ի՞նչ ենք կորցրել այդ ճանապարհին:

Այս հարցը մեզ վերադարձնում է ժամանակին՝ մեր կյանքի ամենաթանկ և միաժամանակ ամենաանխնայելի ռեսուրսին: Լեռ Կամսարի՝ դառնահամ ու դիպուկ դիտարկումը, թե ժողովուրդը ո՛չ ծնվում է, ո՛չ մեռնում, այլ ծերանում է՝ սպասելով փոփոխության, կարծես մեր օրերի համար գրված լինի: Մենք սպասում ենք: Սպասում ենք ճիշտ մարդկանց, ճիշտ ժամանակին, բարենպաստ պայմաններին, մի վճռական քայլին, մի հրաշքի, որը պիտի գա ու մեր փոխարեն կարգավորի տարիներով կուտակված խնդիրները: Սպասում ենք, որ փոխվի իրավիճակը, իշխանությունը, հասարակությունը, աշխարհը, և միայն դրանից հետո սկսենք ապրել այնպես, ինչպես վաղուց ուզում էինք: Բայց պարզ է, որ ժամանակը մեզ հետ որևէ նման պայմանագիր չի ստորագրել: Իսկ մարդու ամենատարօրինակ հատկություններից մեկն այն է, որ «հետո կանեմ», «հետո կասեմ», «հետո կփոխեմ», «հետո կապրեմ» ասելով՝ նա կարողանում է ամբողջ կյանքն անցկացնել ապագայի մեջ: Երբ ավարտվի այս խնդիրը, երբ փոխվի այս իրավիճակը, երբ ավելի շատ գումար ունենանք, երբ աշխարհն ավելի արդար դառնա: Եվ այդպես մենք երբեմն ամբողջ կյանքում պատրաստվում ենք

ապրել՝ չնկատելով, որ կյանքն արդեն անցնում է: Իհարկե, սա չի նշանակում հրաժարվել ապագայի մասին մտածելուց: Ընդհակառակը՝ **մարդն ու պետությունը չեն կարող գոյատևել առանց նպատակի**: Բայց նպատակը չպետք է վերածվի ներկան չապրելու արդարացման: Ժամանակը չի սպասում, որ մենք հաղթահարենք մեր վախերը, համարձակվենք խոսել, փակենք այն դռները, որոնց հետևում այլևս ոչ կյանք կա, ոչ արժանապատվություն, ոչ ապագա:

Երբեմն ամենամեծ համարձակությունը ոչ թե ավելի երկար դիմանալն է, այլ ճիշտ պահին «բավական է» ասելը: Կան ավարտներ, որոնք ցավոտ են, բայց բուժիչ: Կան հարաբերություններ, գործեր ու իրավիճակներ, որոնցից հեռանալը պարտություն չէ, այլ ինքնահարգանքի վերականգնում: Բայց մենք հաճախ վախենում ենք փոփոխությունից ավելի, քան այն ցավից, որին վաղուց սովորել ենք: Ծանոթ դժբախտությունը երբեմն ավելի ապահով է թվում, քան անծանոթ ապագան: Եվ այդպես մարդը շարունակում է սպասել, իսկ տարիները՝ անցնել: Այս նույն սպասումը, սակայն, բնորոշ է նաև ժողովուրդներին: Մենք հպարտանում ենք մեր պատմական հիշողությամբ, բայց երբեմն մոռանում ենք, որ **հիշողությունը միայն անցյալը պահպանելու միջոց չէ**: Այն նաև ներկայի մասին դատողություն անելու և ապագայի համար պատասխանատվություն ստանձնելու հնարավորություն է:

Հայ ժողովուրդն ունի պետականություն ստեղծելու և վերականգնելու երկար պատմություն՝ հին թագավորություններից ու միջնադարյան պետական կազմավորումներից մինչև Կիլիկիա, Հայաստանի Առաջին Հանրապետություն և ժամանակակից Հայաստանի Հանրապետություն: Այս դարաշրջանները տարբեր են, և դրանց միջև մեխանիկական նույնականացումներ անել չի կարելի: Բայց դրանց խորքում կա մի ընդհանուր ձգտում՝ ինքնակազմակերպվելու և սեփական քաղաքական ճակատագիրը տնօրինելու ցանկությունը: 1991 թվականի սեպտեմբերի 21-ի հանրաքվեն այդ պատմական ճանապարհի ժամանակակից հանգրվանն էր: Սակայն նշենք նաև, որ անկախությունը միայն տոնական ամսաթիվ չէ: Այն ամենօրյա աշխատանք է և ամենօրյա պատասխանատվություն:

Մովսես Խորենացու «Ողբը» կարելի է կարդալ նաև որպես պետականության կորստի, հասարակական պառակտման և սեփական ճակատագիրը տնօրինելու կարողության թուլացման մասին քաղաքական զգուշացում: Պատմությունը մեզ սովորեցնում է, որ պետությունը չի թուլանում միայն արտաքին հարվածներից: Այն կարող է թուլանալ նաև ներսից՝ երբ խաթարվում են միասնականությունը, պատասխանատվությունը, արդարությունը և սեփական սխալները տեսնելու կարողությունը: Ազգային արմատներին վերադառնալը անհրաժեշտ է, բայց դա չպետք է նշանակի անցյալում ապրել: Ծառը չի կարող գոյատևել առանց արմատների, բայց արմատները չեն կարող փոխարինել ճյուղերին, տերևներին ու պտուղներին: Նույն կերպ **պատմական հիշողությունը կարող է ուժ տալ պետությանը**, **բայց չի կարող փոխարինել ժամանակակից գիտելիքին, կազմակերպվածությանը, պատասխանատու կառավարմանը և ապագայի հստակ պատկերացմանը:** Մեր նախնիների հաղթանակները չեն կարող հաղթել մեր փոխարեն: Նրանց սխալների մասին հիշողությունն էլ չի կարող մեզ ազատել սեփական սխալների պատասխանատվությունից: Եվ հենց այստեղ է, որ պատմական հիշողության պաշտպանությունը պետք է դառնա գիտելիքի, այլ ոչ թե աղմուկի գործ: **Երբ պատմությունը վերածվում է սեփականության պարզունակ մրցույթի,** գիտությունը նահանջում է, իսկ **քարոզչությունը սկսում է իրեն պատմաբանի տեղ դնել:** Մի կողմը հայտարարում է՝ սա մերն է, մյուսը՝ ոչ, մերն է: Հետո սկսվում են անվանումների փոփոխությունները, հիշողության վերաշարադրումը, երբեմն էլ՝ այն նյութական հետքերի ոչնչացումը, որոնք հնարավոր չէ յուրացնել:

Իսկ պատմաբանը շարունակում է փնտրել փաստաթուղթը: Եվ ճիշտ է անում: Որովհետև մեր պատմական իրավունքները պաշտպանելու լավագույն միջոցը ոչ թե ամենաբարձր գոռալն է, այլ ամենահիմնավորված փաստարկը: Արխիվը երբեմն ավելի բարձր է խոսում, քան հրապարակը: Պատմությունը չի կարելի պաշտպանել՝ այն փոխարինելով առասպելներով, ինչպես չի կարելի պետություն կառուցել՝ այն փոխարինելով պատմական փառքի մասին ճառերով:

Ազգային ինքնությունը սեփական արմատները ճանաչելու և ուրիշների ինքնությունը հարգելու կարողությունն է: Իսկ պատմական հիշողությունը արժեք ունի այնքան ժամանակ, քանի դեռ այն մեզ մղում է ավելի լավ ճանաչելու ինքներս մեզ, ավելի պատասխանատու կառուցելու ներկան և ավելի գիտակցաբար պատրաստվելու ապագային: Այս ամենը, ի վերջո, սկսվում է ընտանիքից: Երեխային կարելի է երկար բացատրել, որ պետք է ազնիվ լինել, հարգել ուրիշին, սիրել հայրենիքը և պատասխանատվություն ստանձնել: Բայց նա ավելի շատ սովորում է մեր վարքից, քան մեր խորհուրդներից: Նա տեսնում է՝ ինչպես ենք վերաբերվում ծնողներին, ինչպես ենք խոսում մեզնից թույլ մարդու հետ, ինչպես ենք կատարում մեր պարտականությունները և ինչպես ենք վերաբերվում այն օրենքներին, որոնց պահպանումը պահանջում ենք ուրիշներից: Ի վերջո որդին ավելի շուտ ու ավելի շատ հետևելու է հոր օրինակին, քան թե նրա խորհուրդներին:

Նույնը հասարակության մեջ է: Եթե վերևում պատասխանատվությունը փոխարինվում է արդարացումներով, ներքևում այն դառնում է սովորություն: Եթե վերևում հաշվետվողականությունը

փոխարինվում է ցուցադրականությամբ, ներքևում քաղաքացին նույնպես սկսում է հավատալ, որ ամեն ինչ կարելի է լուծել աղմուկով: Եթե վերևում պատմությունը հիշում են միայն հանդիսավոր առիթներով, ներքևում այն դառնում է հիշողության զարդարանք: Ու ծնվում է անտարբերությունը, որը հասարակության ամենամեծ վտանգներից մեկն է: Այն անտարբերությունը, երբ մարդը տեսնում է անարդարությունը, հասկանում դրա հետևանքները, բայց որոշում է, որ իրեն չի վերաբերում: Մինչև մի օր պարզվում է, որ վերաբերում է բոլորին:

Մենք կարող ենք ևս մեկ օր ապրել աղմուկով: Կարող ենք վիճել, մեղադրել, ծաղրել, բաժանվել «մերոնց» և «ձերոնց», հետո հանգիստ տուն գնալ՝ մտածելով, թե մեր քաղաքական պարտականությունն ավարտված է: Բայց պետությունը այդպես չի կառուցվում: Պատմությունն այդպես չի պահպանվում: Երեխան այդպես չի դաստիարակվում: Ապագան այդպես չի ստեղծվում: Քանզի պետություն կառուցելը պահանջում է գիտելիք, կամք, համբերություն, ինքնաքննադատություն և պատասխանատվություն: Այն պահանջում է ոչ միայն լավ ղեկավարներ, այլև գիտակից քաղաքացիներ, ոչ միայն ճիշտ օրենքներ, այլև **օրենքի նկատմամբ վստահություն**, ոչ միայն հայրենասիրական հայտարարություններ, այլև ամենօրյա աշխատանք: Եվ այդ աշխատանքը չի կարող փոխարինվել ո՛չ հերթական հանդիսավոր ելույթով, ո՛չ նոր կարգախոսով, ո՛չ էլ պատմական մեծության մասին հերթական հավաստիացմամբ: Այսինքն, նորից պետք է վերադառնանք մարդուն՝ նրա բարոյականությանը, ընտրություններին և ժամանակին: Մարդը ժամանակավոր է այս աշխարհում: Ժամանակավոր են մեր քաղաքները, տները, պաշտոնները, հաջողությունները և նույնիսկ այն մարդիկ, որոնց ներկայությունը երբեմն թվում է հավերժական: Մի օր մեր ոտնահետքերը կմաքրվեն անձրևներից, ջերմ զրույցները կդառնան հիշողություն, հետո՝ լռություն: Այդ պատճառով էլ կյանքը թանկ է ոչ թե այն բանի համար, որ երկար է, այլ այն բանի, որ այն, **ինչ կարող ենք անել այսօր, վաղը կարող է արդեն անհնար լինել**: Ուրեմն ինչո՞ւ ենք այդքան ժամանակ վատնում՝ ուրիշներին համոզելու, որ բարի ենք, փոխանակ պարզապես բարի լինելու: Ինչո՞ւ ենք այդքան ջանք գործադրում ճիշտ երևալու համար, երբ կարող ենք փորձել ճիշտ վարվել: Ինչո՞ւ ենք պահանջում պատասխանատվություն ուրիշներից՝ մեր սեփական պարտականությունները հետաձգելով: **Ինչո՞ւ ենք հպարտանում անցյալով, եթե պատրաստ չենք նույն պատասխանատվությամբ կառուցել ներկան**: Եվ ինչո՞ւ ենք սպասում, որ աշխարհը փոխվի, եթե ինքներս շարունակում ենք վերարտադրել այն նույն սխալները, որոնցից դժգոհում ենք:

Գիտեմ, պատասխանները հեշտ չեն: Բայց գուցե առաջին քայլը պարզ է՝ դադարել ապրել պատրանքներով: Չթաքցնել սեփական սխալները գեղեցիկ բացատրությունների հետևում: Չփոխել համոզմունքները միայն հավանության արժանանալու համար: Չշփոթել լավատեսությունը իրականության ժխտման, հույսը՝ անգործության, իսկ հայրենասիրությունը՝ սեփական թերությունները չտեսնելու իրավունքի հետ: Պետք է կարողանալ տեսնել ցեխը, բայց չմոռանալ երկինքը: Ընդունել դժվարությունները, բայց չդարձնել դրանք անզորության հավերժական արդարացում: **Հիշել արմատները, բայց չհրաժարվել ապագայից**: Սիրել հայրենիքը՝ առանց կուրանալու նրա խնդիրների հանդեպ: Քննադատել իշխանությանը՝ առանց պետության հանդեպ պատասխանատվությունը մոռանալու: Պահպանել սկզբունքները՝ առանց ուրիշների արժանապատվությունը ոտնահարելու: Եվ ամենակարևորը՝ հասկանալ, որ բարոյականությունը, պետականությունը և ժամանակի զգացողությունը միմյանցից անբաժան են: Անբարոյական քաղաքականությունը վաղ թե ուշ խաթարում է հանրային վստահությունը: Պատմական հիշողությունից կտրված պետությունը կորցնում է իր ինքնության կարևոր հենարանները: Իսկ պատասխանատվությունից հրաժարվող հասարակությունը կարող է տարիներով սպասել փոփոխության՝ չնկատելով, որ ժամանակն իր փոխարեն արդեն որոշումներ է կայացրել:

Իսկ մենք դեռ սպասում ենք: Սպասում ենք ճիշտ մարդկանց, ճիշտ ժամանակին, ավելի արդար աշխարհին: Բայց գուցե ժամանակն է հասկանալու, որ **սպասումը չի կարող դառնալ մեր ազգային կենսակերպը, իսկ հույսը՝ անգործության արդարացումը**:

Որովհետև ժողովուրդը չի գոյատևում միայն հիշողությամբ: Նա գոյատևում է կամքով, գիտելիքով, աշխատանքով և սեփական սխալները հաղթահարելու կարողությամբ: Պետությունը չի ամրանում միայն հայրենասիրական ճառերով: Այն ամրանում է պատասխանատու կառավարմամբ, արդարությամբ, կրթությամբ և վստահությամբ: Իսկ մարդը չի դառնում երջանիկ՝ ամբողջ կյանքում սպասելով այն օրվան, երբ վերջապես իրեն թույլ կտա ապրել: Գուցե ժամանակն է ընտրել այն մարդկանց, որոնց կողքին կարող ենք լինել ինքներս մեզ նման, այն գործերը, որոնք արժեն մեր ժամանակը, և այն նպատակները, որոնք արժանի են մեր կյանքին: Ժամանակն է փակել այն դռները, որոնց հետևում այլևս ոչ կյանք կա, ոչ արժանապատվություն, ոչ ապագա: Ժամանակն է սովորել ոչ միայն պահանջել, այլև պատասխանատվություն ստանձնել, ոչ միայն քննադատել, այլև կառուցել, ոչ միայն հիշել անցյալը, այլև արժանի լինել մեր թողած ժառանգությանը: Որովհետև երբեմն ամենամեծ

համարձակությունը ժամանակին վերջակետ դնելն է: Իսկ դրանից հետո՝ նորից սկսելը: Եվ ոչ վաղը, այլ հ**ենց հիմա, հենց այս պահին:**

Լեռ Կամսարը մեզ հիշեցնում է, որ ժողովուրդը կարող է ծերանալ՝ սպասելով փոփոխության: Իսկ մենք պիտի հիշենք, որ ժամանակը չի սպասում ո՛չ մարդուն, ո՛չ ժողովրդին, ո՛չ պետությանը: Պաշտոնները փոխվում են, իշխանությունները հեռանում, փառատոներն ավարտվում, աղմուկը լռում, լույսերը հանգչում: Եվ մնում է այն, ինչ իրականում կառուցել ենք: Մնում է մեր թողած պատմությունը, մեր երեխաների ապագան, մեր երկրի ամրությունը և մարդկանց հիշողության մեջ պահպանված մեր մարդկային կերպարը: Ուստի, եթե ինչ-որ բան պետք է փոխել, փոխենք ոչ միայն կարգախոսները, այլև մեր վարքը: Եթե ինչ-որ բան պետք է **պաշտպանել, պաշտպանենք ոչ միայն անցյալի փառքը, այլև ներկայի արժանապատվությունը**: Եթե ինչ-որ բան պետք է կառուցել, կառուցենք ոչ միայն շենքեր ու հաստատություններ, այլև վստահություն, արդարություն և պատասխանատվության մշակույթ: Որովհետև վաղ թե ուշ բոլոր փառատոներն ավարտվում են: Աղմուկը լռում է: Լույսերը հանգչում են: Եվ մնում է պետությունը: Մնում է պատմությունը: Մնում է ընտանիքը: Մնում է այն, ինչ մենք իրականում արել ենք: Եվ հենց այդ պահին արդեն ոչ մի քարոզչություն չի օգնելու: Իսկ մենք **դեռ սպասում ենք…**

Իսկ ժամանակը, որին ընտրել չենք կարող, վաղուց առաջ է անցել մեզնից: Ու եթե կա մի բան, որ արժե անել, մի խոսք, որ արժե ասել, մի սխալ, որ արժե ուղղել, մի դուռ, որ արժե փակել, կամ մի նոր ճանապարհ, որ արժե սկսել, ապա դրա համար ամենահարմար ժամանակը վաղը չէ: Այն հինգ րոպեն չէ, որ կրկին պատրաստվում ենք կորցնել: Այն հենց հիմա է:

Сдана / Հանձնվել է՝ 09.10.2026
Рецензирована / Գրախոսվել է՝ 13.10.2026
Принята / Ընդունվել է՝ 16.10.2026